

ԵԶՂԻՆԵՐԻ ԴԱՎԱՆԱՆՔԸ
(Հիմնական աստվածաբանականները. սուրբ գրքերը)

Գ. Ս. ԱՍԱՏՐԵԱՆ, Ա. Գ. ՓՈԼԱԴՅԱՆ

Եզդիները (ինքնանվանումը՝ էզիդ) ապրում են գլխավորապես Իրաքում՝ Սինջարում (որտեղ գտնվում է նրանց հիմնական սրբավայրը) և Շեյխանի շրջաններում, Թուրքիայում՝ Թուր-Արզինում, Մծրինում (Նիսիբիս), Դիար-բեքրում, Տիգրիսի վերին հովիտներում, Մուշում, Սասունում, Բիթլիսում և Վանում, Եզդիներ կան նաև Սիրիայի Սուրշ, Բիրշակ, Քլիս, Աֆրին, Ամուզա, Կամիշլի շրջաններում։ Եզդիների մի հատված 1830—1840-ական թթ. Իրաքի նշված շրջաններից՝ խուսափելով թուրքերի և քրդերի հալածանքներից, գաղթել է Հայաստան, որտեղից էլ հետագայում ցրվել է Անդրկովկասի տարբեր վայրերում։ Եզդիական սփյուռքի ամենախոշոր կենտրոնը, այնուամենայնիվ, մնում է Խորհրդային Հայաստանը (մոտ 50 հազար)։ Եզդիների ընդհանուր թանակը՝ ըստ նորագույն տվյալների, կազմում է մոտ 200 հազար մարդ (Брык, с. 210, 211, 440, 447, 518, 530)։

Մեր պատմությունը չգիտի մի դեպք, որ մթազնի հայ-եզդիական անխառն բարեկամությունը Այս բարեկամությունը սրբագործված է մեր համատեղ թափած արյունով, այնպիսի պայծառ անուններով, ինչպիսին Պողոս Քահանան է (Քյաշիշ Պոլոն), Միրզա-աղան, Զորավար Անդրանիկը, Զահանգիր-աղան, Ուսուր-բեգը (վերջինս Հայաստանի հանրապետության խորհրդարանում եզդիների երեսփոխանն էր) և այլն։ Դեռևս 1910 թ. Ստեփան Կանայանցը գրում էր. «...Հայոց հետ թե՛ Տաճկահայաստանում և թե՛ Ռուսահայաստանում եզդիները սերտ կապված են և քրվա՝ քավոր և բարեկամ են դառնում։ Եզդիներից շատ-շատերը Ռուսահայաստանում այնպես հայերեն են խոսում, որ շատ անգամ դժվար է լինում հայ գյուղացուց ջոկել։ Ռուսահայաստանի եզդիների այժմյան պետ Ուսուր-բեգը (վերևում նշված անձնավորությունը—Գ. Ա., Ա. Փ.) սովորել է ս. էջմիածնի Գևորգյան ճեմարանում Մակար կաթողիկոսի ժամանակ» (Կանայանց, էջ 17)։

Եզդիների՝ մեր ժողովրդի նկատմամբ անխաղաղ և պարզ եղբայրական զգացմունքները լավագույնս արտահայտված են 1909 թ. Իրաքից էջմիածին այցելած նրանց հոգևոր առաջնորդ Միր Իսմայիլի ուղերձում, որտեղ նա՝ դիմելով հայրապետական փոխանորդ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանին, գրում է. «Իրավագետ և ժողովրդապետ Հայրիկի (Խրիմյան հայրիկի—Գ. Ա., Ա. Փ.) տեղակալ Գևորգ Սուրենյան, ես կկամենայի, որ ամեն մի եզդի թո՛մոտ դալիս, դու առհասարակ նորան հայ համարելի և խորություն չդնեիր, թե սու հայ է, թե եզդի։ Սա կցանկանայի եզդիներին մի պատվեր թողնել, որ ամեն ժամանակ հայոց եկեղեցուն ծառայեն, ինչպես մեր տանը, ինչպես մարգարեի և ինչպես Աստծո տանը։ Խնդրում եմ Աստծուց, որ այս տունը հաստատ մնա, ինչպես հայերի, այնպես էլ եզդիների համար» (Կանայանց, էջ 18, այդ մասին հանգամանորեն խոսում է նաև ինքը՝ Միր Իսմայիլը իր գրքում, տե՛ս Isma'il-beg Çöl, 20—27. ավելի մանրամասն տե՛ս նաև՝ Զալանի, էջ 228—247)։

Մահմեդականության ագրեսիվ բնույթը, կրոնական անհանդուրժողականությունը դարավոր թշնամանքի առիթ են դարձել քրդերի և եզդիների միջև՝ հանգեցնելով շատ հաճախ արյունահեղ միջադեպերի և ընդհարումների։ Եզդիները միշտ էլ հալածվել են մահմեդական ժողովուրդների՝ հատկապես

թուրքերի կողմից: XVI—XVII դդ. սկսած Օսմանյան կայսրության մեջ մահմանդական բարձր հոգևորականության ներկայացուցիչները պարբերաբար հրապարակում էին եզդիների դեմ ֆեթվաներ (արարքեր են *ḥukm* նշանակում է «որոշում, դատավճիռ»՝ ըստ մուսուլմանական շարիաթի: Այստեղ նշանակում է անհավատների դեմ պայքարի կոչ): Հատկանշական է, որ այդ հոգևորականներից առաջինը ազգությամբ քուրդ Աբու աս-Սաուդ ալ-Իմադին էր (մանրամասն տե՛ս Danilüji, 428—444): Քիչ չեն եղել դեպքեր, երբ եզդիները հալածանքներից խուսափելու համար, հարկադրված դավանափոխ են եղել՝ ընդունելով մահմեդականություն: Նման երևույթով է պայմանավորված այն, որ մի քանի եզդիական ցեղային միավորումներ, ինչպես սիպիկների և ութկիների միավորումները, իրենց կազմում ընդգրկում են նաև մուսուլմանական ցեղեր: Այդ ամենի հետևանքով նվազել են եզդիների թիվը և նրանց տարածման շրջանակները: Թշնամաբար տրամադրված հարևանների մշտական հալածանքները և կրոնական հետապնդումները նպաստել են եզդիների կղզիացմանը և մեկուսացմանը մահմեդական շրջապատից, և հակառակ դրան՝ նրանց հակվածությանը դեպի քրիստոնյաները, հատկապես՝ հայերը:

Եզդիների լեզուն (ինչպես իրենք են կոչում՝ էզդիկի), որով խոսում են նաև հյուսիսային քրդերը՝ կուրմանջները, պատկանում է իրանական լեզվախմբի հյուսիս-արևմտյան ենթաճյուղին:

* * *

Եզդիական դավանանքում շատ բան դեռևս պարզված չէ: Այս հետաքրքիր կրոնի մասին կան բազմաթիվ հակասական տեղեկություններ: Օրինակ, եզդիական որևէ աստվածություն, նրա տեղի և ֆունկցիաների մասին կարելի է կրոնական լեգենդներում հանդիպել այնպիսի վկայությունների, որոնք միանգամայն հակասական են, կամ էլ տարբեր՝ այդ նույն աստվածության մասին եզդիական սուրբ գրքերում եղած տեղեկություններից. սրանք էլ իրենց հերթին կարող են ամբողջովին տարբերվել եզդիական հոգևորականության կարծիքից: Նման իրավիճակը բացատրվում է թերևս եզդիականության բավական ուշ ծագմամբ (մոտ XII—XIII դդ.), ինչպես նաև բոլոր դոգմատիկ կրոններին հատուկ կենտրոնական, կոնսոլիդացնող, ուժեղ հոգևոր կենտրոնի՝ եկեղեցու բացակայությամբ: Եզդիական դավանանքը ավելի շուտ կարելի է բնորոշել որպես տարբեր բնույթի հավատալիքների կոմպլեքս, բան դոգմատիկ կրոն, ինչպիսին քրիստոնեությունն է կամ իսլամը:

Եզդիականության ուսումնասիրությունը շուրջ երկու հարյուր տարվա պատմություն ունի (եզդիների մասին մատենագիտությունը տես՝ *Awād*)։ սակայն մինչև օրս իրենց վերջնական լուծումը չեն ստացել այդ կրոնական ուղղության ծագման խնդիրները: Առանձին հարցեր, ինչ խոսք, գրականության մեջ այս կամ այն չափով պարզաբանվել են, սակայն բազմաթիվ հարցեր դեռևս մնում են անլուծելի: Եզդիների մասին շատ է գրվել, և որպես օրինք միշտ էլ գիտական արժեք ունեցող դատողությունների կողքին տեղ են գտել ընդհանուր մտքեր: Բավական է նշել, որ չի կարելի հանդիպել այս կամ այն չափով եզդիներին նվիրված որևէ ուսումնասիրության, որտեղ չխոսվի նրանց դավանանքի սինկրետիկ բնույթի մասին, որ, իբր, այս ուսմունքը բաղկացած է զրադաշտականությունից, քրիստոնեության, մահմեդականության և նույնիսկ բուդդայականության ու մոլիսականության խառնուրդից: Նման փոխառյալ տարրեր, անկասկած, առկա են եզդիների դավանանքում, սակայն դրանց դերը չի կարելի գերազնահատել: Օրինակ՝ ընդունված է նշել, որ եզդիների մոտ արևի, լուսնի և կրակի մեծարումը փոխառնված է զրադաշտականությունից: Պետք է ասել, որ բնական երևույթների, տարրերի մեծարումը, ինչպես հայտնի է, մտնում է յուրաքանչյուր ժողովրդի նախնական

հավատալիքների համակարգի մեջ, և բնականաբար, դա բնիկ երևույթ է և չի կարող դիտվել որպես փոխառություն: Բավական է նշել, որ ե՛րբևհե՛ր լուսնի, ե՛կրակի «պաշտամունքի», այնքանով, որքանով այն տարածված է եզդիների շրջանում, կարելի է հանդիպել պարսիկների, հայերի, տաշիկների և այլ ժողովուրդների նախնական հավատալիքներում (հմտ. օրինակ Spiegel, 41—70; Vollmer-Bludger, 234—235, 417, Widengren, 209—274, Eilers, 301—309, Петисар, passim և այլն):

Վերջերս մեղանում, մանավանդ սիրող գրագետների շրջանում, սկսել է տարածում գտնել ժամանակին Ն. Մառի կողմից արտահայտված (տե՛ս Nikitine, 225) այն միամիտ և մեթոդաբանական թյուր կարծիքը, որ իբր, եզդիականությունը եղել է նախախաղածական շրջանի «համաքրդական» կրոն: Դատելով եղած փաստերից, կարելի է պնդել, որ եզդիական դավանանքը որպես կրոնական ուսմունք ուշ շրջանի երևույթ է՝ ձևավորված միջնադարում, սուֆիական սուրստրատի վրա, և, ընականաբար, բրդերի համընդհանուր կրոնը լինել չէր կարող: Ինչ վերաբերում է նախախաղածական ժամանակաշրջանում բրդերի՝ որպես առանձին էթնիկական միավորի ձևավորմանը, ապա դա չափազանց վիճելի հարց է և կարոտ՝ հատուկ ուսումնասիրության (տե՛ս օրինակ՝ Асатрян—Лившиц):

Եզդիները հավատում են աստծուն (Xwade)՝ առաջին կարգի աստվածությունը և նրա Երրորդությանը, որտեղ առաջին տեղը գրավում է Մայաթ-Թավուսը, երկրորդ տեղը՝ Շեյխ Ազին, երրորդ տեղը՝ Եզիզը: Հարկ է ասել, որ այս բաժանումը պայմանական է, քանզի շատ հաճախ դժվար է որոշել այս աստվածությունների կոնկրետ ֆունկցիաներն ու դիրքը:

Աստծու մասին եզդիական պատկերացումները հեշտ չէ բնութագրել Xwade-ն՝ ո՛չ հին հունական դիցարանության մարդկային գծերով օժտված աստվածությունն է, ո՛չ էլ՝ հրեական ամենակարող և անողոր Եհովան: Եզդիական աստվածը միաժամանակ շատ քիչ է նման ինչպես մահմեդական աստծուն՝ բացարձակ գերբնական Ալլահին, այնպես էլ՝ քրիստոնեական ողորմած և ներող աստծուն: Հիմնական գիծը, որ եզդիական աստծուն միավորում է նշված կրոնների աստվածներին, դա նրա արարչագործական (դեմիուրգի) ֆունկցիան է: Այս վարդապետության մեջ աստված տիեզերքի սոսկ ստեղծողն է և ոչ նրա պաշտպանն ու հովանավորը:

Մի այլ տարր, որ առկա է եզդիական պատկերացումներում և որը նույնպես համընկնում է աստծու մասին այլ կրոնների պատկերացումներին, դա նրա արանսգենդենտությունը մասին դադափարն է, սակայն այստեղ էլ, ինչպես այլ դեպքերում, այն տարբերվում է մյուս կրոնների համապատասխան գաղափարներից: Եզդիականության մեջ արսրիչը ներկայացված է որպես ամենակարող էակ՝ օժտված գերբնական ուժով, սակայն հոռու աշխարհի գործերից և հոգսերից: Եզդիները, ինչպես նշվեց, հավատում են, որ աստված իրեն արտահայտում է իր Երրորդության միջոցով. Մայաթ-Թավուսի՝ սիրամարգի, Շեյխ Ազիի՝ ծերունու և Եզիզի՝ երիտասարդի կերպարանքով: Այդ պատճառով էլ աստված եզդիական կրոնական հավատալիքներում արտահայտված է բավական մշուշապատ և անորոշ կերպով, որին որևէ աղոթք կամ զոհաբերություն չի նախատեսված:

Մույն հոգվածում մենք նպատակ չունենք անդրադառնալու եզդիական դավանանքին վերաբերող բոլոր խնդիրներին (տե՛ս Ասատրյան—Փուլադյան. հմտ. նաև՝ Асатрян, նորագույն աշխատանքներից հմտ.՝ Guest), այլ ցանկանում ենք հիմնական ուղարկությունը բեռնել այս դավանանքի հանգուցային հասկացության՝ Երրորդության վրա, որն իր արտահայտությունն է գտնել գրավոր և բանավոր ավանդույթներում:

Մալաբ-Թավուս (սիրամարգ-հրեշտակ)։ Այս աստվածության մասին խոսելիս ընդունված է նրան կոչել շարիքի արտահայտություն, սատանայի մարմնավորում և այլն։ Դա էլ, ըստ երևույթին, հիմք է տվել, որ եզդիներին հաճախ անվանեն սատանայապաշտներ, սատանայի հետևորդներ և այլն։
 مالا بـ تـاـوـس، արաբ․ مالا تـاـوـس، գերմ․ Teufelsanbeter, անգլ․ devil-worshippers, ռուս․ поклонники дьявола և այլն)։

Ըստ եզդիական հավատալիքների, աստված տիեզերքն ստեղծել է Մալաբ-Թավուսի օգնությամբ՝ նրա հետ միասին։ Իսկ որոշ բանավոր լեզենդներում էլ նա է անմիջապես հանդես գալիս որպես արարիչ։ Հարկ է սակայն նշել, որ ինչպես այլ դեպքերում, այնպես էլ Մալաբ-Թավուսի կապակցությամբ, ամեն ինչ չէ, որ պարզ է եզդիական դավանանքում։ Նա երբեմն հանդես է գալիս որպես աստված, երբեմն՝ նրա տեղակալ, երբեմն էլ՝ որպես նախկինում աստծու մերձավոր և հետագայում դրախտից վտարված հրեշտակ։ Մալաբ-Թավուսի կերպարի վերջին ընկալումը եզդիական հավատալիքներում բավական թույլ է արտահայտված։ Այն եզդիական սուլն աստվածությանը վերագրվել է ավելի շուտ եզդիների նկատմամբ թշնամաբար տրամադրված մահամեղական հարևանների կողմից՝ Արևելքում տարածված հայտնի այն ավանդության ազդեցությամբ, ըստ որի սատանան նախկինում եղել է աստծու մերձավոր հրեշտակներից, որը դրդել է Ադամին ու Եվային ուտելու արգելված ցորենի հասկերը (աստվածաշնչային ավանդության խնձորի փոխարեն), և դրանով պատճառ դարձել վերջիններիս վտարմանը դրախտից¹։ Դրանում, ըստ արևելյան սուլն ավանդության, սատանային օգնել է օձը՝ նրան իր բերանում թաքցրած դրախտ մտցնելով։ Աստված զայրանում է այդ արարքի համար և սատանային վտարում է դրախտից, իսկ օձին՝ զրկում ձեռքերից ու ոտքերից և դատապարտում հավերժ սողալու երկրի վրա։

Հարց է առաջանում. ինչով է բացատրվում այս աստվածության կերպարանքը թուշի՝ սիրամարգի տեսքով։ Սիրամարգը (արաբ․ ١٩١٤) Արևելքում համարվել է գեղեցկության և վեհության արտահայտություն, որը մեծ տեղ է գրավել նաև սուֆիական տերմինաբանության մեջ որպես իմաստության և շուքի խորհրդանիշ։ Սիրամարգի կերպարը հանդիպում է սուֆիական տարբեր աղանդներում (Nikitine, 227)։ Իսկ ուղղափառ մահմեդականների պատկերացումներում սիրամարգը ընդհանրապես համարվել է դրախտային թռչուն, որը նաև հպարտության և գոռոզության մարմնավորում է։ Իրաքի հյուսիսում տարածված մի ավանդության համաձայն սիրամարգը նախկինում եղել է աստծու սիրելի թռչունը և ապրել դրախտում, բայց մեծամտության և գոռոզության համար վտարվել է այնտեղից։ Որպես պատիժ աստված նրա ոտքերը դարձրել է անձոռնի, և օձին կարգել դրախտի դռներ, որպեսդի շթողնի նրան կրկին դրախտ մտնել՝ մինչև ապաշխարությանը իր մեղքը չքավի²։

Միջնադարյան պարսիկ սուֆի բանաստեղծ Ֆարիդ էդ-Դին Աթթարը իր «Մանթեղ-օթ-թեյր» գրքում գրում է.


1 Ստորև ներկայացվող (էջ 143) Սև մատյանում խոսքը դնում է միայն Ադամի մասին, որին զրկում է ցորենն ուտել Մալաբ-Թավուսը, ընդ որում, Ադամը վտարվում է դրախտից, իսկ Մալաբ-Թավուսը՝ համարձակում երկինք (տես՝ էջ 145, հոդվ. 18)։

2 Այս ավանդությունը հեղինակների կողմից 1980 թ. դրի է առնվել Խուսեյնաբադի ընկերի Համդիդ ալ-Հայդարիից։

خه خه ی طاق باغ هشت در
 سوختن از زشم مار هفت سر
 صحت این مار در خونت فکند
 از بیشت برین روزت فکند...
 تا که دانی علاک این مار را
 کی شوی شایسته این اسرار را
 گر خلاصی باشی زین مار زشت
 دمت باخوبش گمردن بیشت

«Ողջույն բնդ, ով դու սիրամարդ՝ ութդոնանի դրախտից, դու վառվեցիր (տուժեցիր) ութդիխանի օձի խայթից, Այս օձի հետ քո ընկերությունը քնդ արյան մեջ թաթախեց, և [պատճառ դարձավ] նդեմական դրախտից քո վտարմանը... Ինչպես կարող ես դու դառնալ այս գաղտնիքի արժանին (մասնակիցը), մինչև որ չսպանես այս օձին: Երբ աղատվես այս արգահատելի օձից, Աղամբ բնդ կտեղավորի իր հետ դրախտում: (՝ԱՂԻՁ՝, 4):»

Ինչպես երևում է բերված բանաստեղծական հատվածից, սատանան հանդես է գալիս այստեղ օձի կերպարանքով, որը խաբել է սիրամարդին և նսլաստել՝ դրախտից նրա վտարմանը³:



Սանցակ.
զծանկար Նիկոլայ Դեոբզյանի

Հին իրանական հավատալիքներում սիրամարդը համարվում է Ահրիմանի՝ սատանայի ստեղծածը: Հմմա. Եղնիկի մոտ՝ «Որպէս ես ասեմ՝ թե Ահրիման ասաց, ոչ եթէ չկտրեմ առնել լրարի ինչ, այլ չկամիմ. և առ ի հաստատուն դրանն առնելոյ՝ արար սիրամարդ» (Եղնիկ, էջ 139. հմմտ. նաև IIIТакель-берг, с. 9—10):

Եզդիական գլխավոր աստվածությունը սիրամարդի կերպարանքով պատկերելը, հավանաբար, հարկ է բացատրել սուֆիական ազդեցությամբ: Ինչպես նշվեց, սուֆիական գաղափարախոսության մեջ այս թռչունը իմաստության և վեհության խորհրդանիշ է: Այսուհանդերձ սիրամարդի՝ որպես թևկուղ և վեհաշուք, լայց աստծու կողմից անիծված և սատանայի հետ անմիջապես կապ ունեցող արարածի մասին հավատալիքների կոմպլեքսը գլխավորապես մահմեդական շրջապատում նախադրյալներ է ստեղծել եզդիական Մալաբ-Թավուսին համարելու սատանայի մարմնավորում: Այստեղ փաստորեն կատարվել է վտարված սատանայի (падший ангел) և սիրամարդի կերպարների

³ Հատկանշական է, որ Հալեշում, եզդիների գլխավոր սրբավայրի՝ Շեյխ Աղիի դամբարանի մոտերի մի կողմում քանդակված է հեկայական մի օձ (Dvoci, 206): Օձի պաշտամունքի հետքեր կարելի է հայտնաբերել նաև ծայրահեղ շիական ուղղության հետևորդ սոդոմոլորդների մոտ: Դա առավել պարզորոշ կերպով արտահայտված է զառանների հավատալիքներում (տե՛ս Asatrian —(Evorglan, 508):

միաձուլում (կոնտամինացիա)՝ ստեղծելով նոր, վտարված սատանա-սիրամարգի կերպար:

Հնդհանրապես պետք է նշել, որ սիրամարգի պաշտամունքի առանձին տարրեր, որոնք ամենայն հավանականությամբ սկիզբ են առել հնդկական թերակղզում, վաղ պատմական ժամանակաշրջաններից լայնորեն տարածված են եղել նաև Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների մեջ և արտացոլվել են նրանց հավատալիքներում, հոգևոր և նյութական մշակույթի հուշարձաններում (մանրամասն տե՛ս Meyer II, 33; Brentjes; Mañe; Амурбекян, с. 68—70):

Մալաթ-Թավուսը եզդիների ծիսական առարկաների համակարգում պատկերվում է աքաղաղի կերպարանքով՝ ամրացված աշտանակին, նման ձևի պղնձե արձանիկներ պահվում են Լալեշում և ամեն տարի դավանների (եզդի հոգևորականության ստորին դասերից մեկը. տե՛ս Ասատրյան—Փուլադյան) կողմից ման են ածվում եզդիարնակ շրջաններում: Դրանց միջոցով հավատացյալ համայնքից նյութական հանգանակություն է գանձվում՝ հոգևոր հոգևոր կենտրոնի: Այդ արձանիկները կոչվում են սանգակներ և խիստ գաղտնի են պահվում այլադավաններից:

* * *

Շեյխ Ադի (Շեյխ Ադի բին Մուսաֆեր). Մալաթ-Թավուսից հետո եզդիական պանթեոնի երկրորդ խոշոր դեմքը, ինչպես նշվեց, Շեյխ Ադին է, երբեմն՝ Հադի: Եզդիները նրան համարում են աստծու առաքյալը և հավատում են, որ նա ստեղծվել է Մալաթ-Թավուսի ստվերից: Շեյխ Ադին, ինչպես և Մալաթ-Թավուսը, հանդիսանում է աստծու փոխանորդը, իսկ որոշ ավանդույթներում նաև ստանում է աստծու հատուկ ֆունկցիաներ: Ուշագրավ է այն փաստը, որ Շեյխ Ադի բին Մուսաֆերը պատմական անձնավորություն է, ծագումով արաբ, Օմայան ազնվական տոհմից: Նրա մասին տեղեկությունների կարելի է հանդիպել բազմաթիվ արաբական միջնադարյան սկզբնաղբյուրներում (տե՛ս Ibn Xallikan, 254—255. Ibn al-Athir, 80—81. Ibn Kathir, 243 և այլն):

Շեյխ Ադին ծնվել է պատմական Սիրիայի Բաալբակի շրջանի Բեյթնար գյուղում (այժմ Լիբանանում) 1072 թ.: Հաքքարի լեռներում ընակվելու պատճառով ստացել է ալ-Հաքքարի մականունը: Երկար ղեկավարումներից հետո նա հաստատվել է Լալեշում՝ Մուսուլ քաղաքից հյուսիս, խոր ձորի մեջ դսևվող նեոստորական ավերված մի եկեղեցում (տե՛ս Yāqūt, 28), որտեղ էլ մահացել է 1162 թ.: Նա հիմք է դրել այսպես կոչված աղավիհների կրոնական ուղղությանը (իր անունով): Ըստ աղբյուրների վկայության, Ադին եղել է իր ժամանակի աղանդավորական շրջաններում հայտնի ամենախոշոր բարոգիչներից մեկը, միջնադարի ականավոր գիտնական և փիլիսոփա: Նա սերտ հարաբերություններ է ունեցել սուֆիական կրոնական ուղղության կարկառուն դեմքերի՝ Ուկայլ ալ-Մանրաբիի, ալ-Հուվանիի, Աբդ ալ-Կադիր ալ-Գիլանիի (Զիլի) և այլոց հետ: Շեյխ Ադիի առանձին գրվածքներ (կրոնական տրակտատներ, բանաստեղծություններ) պահպանվել են, սակայն անհրաժեշտ չափով դեռ ուսումնասիրված չեն և գիտական շրջանառության մեջ չեն մտցված:

Արևելագիտական գրականության մեջ դեռևս հիմնավոր կերպով չի պարզարանված Շեյխ Ադիի դերը եզդիական կրոնական ուսմունքում (ավելի մանրամասն՝ Ասատրյան—Փուլադյան): Տակավին անհասկանալի է մնում, թե ինչպե՞ս և ի՞նչ պատճառով Շեյխ Ադին եզդիական դավանանքում ճանաչվեց որպես աստծու առաքյալ, չնայած, ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, նա դեռևս իր կենդանության օրոք լայն համբավ էր վաստակել (տե՛ս, օրինակ՝ Ibn Xallikān, ibid.):

Շեյխ Ադիի կյանքի վերջին շրջանում Սիրիայից նրա մոտ են տեղափոխվում եզդոր որդիները: Սրանք հիմնականում զրադվում էին կրոնական գոր-

ծունելությամբ, որոնց ջանքերով էլ աղավիհների աղանդը գնալով տարածվում էր շրջակա իրանալեզու լեռնցիների մեջ (ներկայիս եզդիների)՝ ձեռք բերելով մեծ թվով կողմնակիցներ և Պատահական չէ, որ եզդիները նույնիսկ այժմ հաճախ իրենց կոչում են աղաբիներ (աղավի բառից)՝ առանց գիտակցելու դրա իմաստը:

Մեր կարծիքով Շեյխ Ադին եզդիական դավանանքում տեղ է գտել հավանաբար ուշ շրջանում, երբ արդեն ստացել էր առասպելական սրբի հոշակ, իսկ նրա կրոնական աշխարհայացքը մոռացության էր մատնվել:

Եզդի (Սըրթան էզիդ). Եզդիական պանթեոնի երրորդ հիմնական դեմքը Եզիդն է, Դիտական որոշ շրջաններում տարածված է այն կարծիքը, որ նա մարմնավորում է հին իրանական յազատ-ներին (հին իրան. *yazata—«աստվածություն. զոհարհրության արժանի»): Ոմանք էլ այս աստվածության առաջացումը կապում են արարական Օմայան հարստության երկրորդ խալիֆ Եզիդ ըին Մուավիայի անվան հետ: Ուսումնասիրողների մի այլ խումբ էլ այս անունը կապում է իրանական Եզդ քաղաքի անվան հետ (հմտ. Driver, 200. Семенов, с. 79): Բերված կարծիքները, ինչ խոսք, բավական պայմանական են և զուրկ պատմական հիմքից: Օրինակ, ինչպե՞ս կարելի է բացատրել Օմայան խալիֆի և եզդիական համանուն աստվածության կապը: Ենթադրյալ պատմական հավաստի փոստերից, նմանօրինակ կապերի առկայությունը բացառվում է: Ինչ վերաբերում է հին իրանական յազատներին, ապա նրանք չէին կարող նախատիպ հանդիսանալ բավական ուշ ժամանակում ունեցող մի աստվածության համար: Իսկ իրանական Եզդ քաղաքում երբեք եզդիներ չեն ապրել. այն դարերի ի վեր բնակեցված է եղել զրադաշտական պարսիկներով:

Այնուհանդերձ հարկ է նշել, որ շնայած Օմայան երկրորդ խալիֆ Եզիդ ըին Մուավիան ոչ մի կապ չի ունեցել եզդիների հետ, մանավանդ, որ նա իշխել է ընդամենը 3,5 տարի (680—683 թթ.) և չի հանդիսացել որևէ կրոնական ուսմունքի հիմնադիր, սակայն, ամենայն հավանականությամբ հենց նրա հետ է կապվում եզդիների ինքնանվանումը և համանուն աստվածության առաջացումը: Հայտնի է, որ 680 թ. Քերբելայի ճակատամարտում Եզիդ ըին Մուավիան պարտության մատնեց խալիֆայության գահի հավակնորդներ Ալի իրն Արու Քալիդի դավակներ Հասանին և Հուսեյնին: Այդ ճակատամարտում սպանվեց Հուսեյնը: Նման վերաբերմունքը դեպի մարգարեի թոռները (Հասանի և Հուսեյնի մայրը՝ Ֆաթիման, Մուհամեդի դուստրն էր) պատճառ դարձավ, որ Եզիդը մահմեդականների, մասնավորապես շիաների շրջանում, հրեյակվի որպես հանցագործ և սրբապիղծ անձնավորություն: Ընդհանրապես նրան համարել են շարիքի մարմնավորում, սատանայի հետնորդ: Այդ պատճառով «Եսիդ» անունը հետագայում դառնում է հասարակ անուն և անհավատության խորհրդանիշ ամբողջ Արևելքում: Հետաքրքրական է, որ այդ անվան նման օգտագործումը վկայված է նաև հայ գրականության մեջ, մանավանդ աշուղական պոեզիայում, որը իր ժանրի առանձնահատկությամբ պարունակում է սուֆիական տարրեր: Օրինակ, Սայաթ-Նովայի մոտ այդ բառը հանդիպում է նրա թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն տաղերում: Հմտ.՝ Շատ մարթ բու էշխեմեկ կու դառնա եզիդ (այսինքն՝ Շատ մարդ քո սիրուց կդառնա անհավատ—Գ. Ա., Ա. Փ), /Արի մե ոռհմ արա, լավ կացի մեզիդ: Կամ՝ էշխեմեկ դառիլ իմ եզիդ, /Հավիցա մաշվեցա ֆիզիդ (Սայաթ-Նովա, էջ 112, 118): Հմտ. թուրքերեն՝ yigİlsun yle|zİdlar, İamā tolansun, /Namar-clūn gögslān āīamā tolansun «թու հավաքվեն անհավատները (բնագրում՝ եզդիները), թող ամբողջ կազմեն, թող անաղնիվ մարդու կրծքին դանակ դիմ տան» (Սայաթ-Նովա, էջ 96):

Եզդիների հռչակը որպես անհավատների և սատանայապաշտների հակառակ ժողովուրդների շրջանում նախադրյալներ է ստեղծել նրանց կոչելու Եզդիներ, այսինքն՝ անհավատներ, սատանայի հետևորդներ: Դրան մեծապես նպաստել է նաև Եզդիների կապը ադավիհների հետ, որոնք, ինչպես նշվեց, սերում էին Օմայան դինաստիայից, որը հիմնադրել է Եզդի խալիֆի հայրը՝ Մուավիա ըին Սուֆիանը: Այս անվանումը հավանաբար սկզբնապես շոյել է Եզդիների ինքնասիրությունը, մանավանդ որ նրանք՝ ադավիհների պրոպագանդայի ազդեցության տակ, իրենց համարում էին Օմայանների հետևորդներ, իսկ ավելի ուշ այն դարձել է ժողովրդի ինքնանվանում: Հետագայում այս երևույթը նպաստել է Եզդիական պանթեոնում մի նոր աստվածության՝ Եզդիի ստեղծմանը, որի ուշ ծագումով է բացատրվում վերջինիս ֆունկցիաների ծայրահեղ անորոշությունը:

Այն փաստը, որ «Եզդի» անվանումը տրվել է հարևանների կողմից (էկզոթեոնիմ)՝ որպես քամահրական մականուն, իսկ հետագայում վերածվել է ցեղանվան, չի հակասում էթնոնիմիկայի առաջացման հայտնի սկզբունքներին: Հայտնի է, որ Եզդիները միշտ չէ, որ կոչվել են այդ անվամբ. միջնադարում նրանք հայտնի էին որպես դասրենի, երբեմն՝ ադավի կամ Զուդի:

ԵԶԴԻԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԳՐԹԵՐԸ

Ընդհուպ մինչև անցյալ դարի վերջը արևելագիտական շրջանակներում իշխում էր այն կարծիքը, որ Եզդիական ուսմունքը հիմնված է զուտ րանավոր ավանդույթների վրա, և որ Եզդիները զուրկ են կրոնական որևէ գրավոր օրենսգրքից (հմմտ. օրինակ՝ Карцев): Իսկ բանավոր ավանդություններն էլ (աղոթքներ, հիմներ և այլն) Եզդիական դավանանքի ներկայի (էզոտերիկ) բնույթի պատճառով անմատչելի էին հետազոտողներին: Այսու Եզդիականության մասին դիտական հասարակության տեղեկությունները սահմանափակվում էին միայն կողմնակի աղբյուրների շատ հաճախ ոչ ճիշտ և կողմնակալ ավյալների վրա¹:

Այնուհանդերձ, առանձին աշխատանքներում, մանավանդ ճանապարհորդների նոթերում, հաճախ հանդիպում էին ինչ-որ աղոտ ականակներ Եզդիական սուրբ գրքերի գոյության մասին, որոնք իբր պահվում են Լաչևում՝ Եզդիների սրբավայրում: Մասնագետների հիմնական մասը, բնականաբար, այս տեղեկություններին վերաբերվում էր թերահավատորեն: Միայն մեր դարի սկզբներին արար կաթուղի հոգևորական և գիտնական Անաստաս Մարիին մեծ դժվարությամբ հաջողվեց ձեռք բերել երկու այս գրքերի ծածկագրված պատճենը, որը նա վերծանելով հրատարակեց 1911 թ. (տե՛ս Anaslase Marie): Դրանով նա վերջնականապես հաստատեց Եզդիական երկու սուրբ գրքերի գոյությունը Լաչևում: Եզդիական ծածկագրերը, որոնցով գրված են այս գրքերը, բաղկացած են 33 տառից, որոնց մեծ մասը ածանցված է նևստորական այբուբենից:

Եզդիական ուսմունքի հիմնադրույթներն ամփոփող այս փաստաթղթերը մեծ հետաքրքրություն առաջացրին արևելյան գրագետների լայն շրջաններում: Նրանց միջոցով հայտնվեցին այդ բնագրերի մի քանի նոր տարբերակներ, որոնք լայնորեն մտան շրջանառության մեջ, թարգմանվեցին գերմաներեն, իտալերեն, անգլերեն: Հրապարակի վրա առկա ամենալիակատար և գիտակալներն բարձր արժեք ունեցող հրատարակությունը պատկանում է ավստրիացի

¹ Անմիջականորեն Եզդի հոգևորականներից դրի առած առաջին կրոնական տեքստը 1891 թ. հրատարակել է հայ գիտնական Ս. Ա. Եզդիադարյանը (տե՛ս Ермзапов, с. 221-227): Այն իրենից ներկայացնում է Եզդիական հիմնական աղոթքի երեք տարբերակ, որոնք հետադարձում ճշտությամբ վերահրատարակեց հունգարացի արևելագետ Հուգո Մոկաշ (տե՛ս Mokas, 37-48): Եզդիական կրոնական բանավոր հիմների (Եզդի-Ն-Ի-Եզդի) պատկանելի մի հավաքածու հրատարակել են Վերդերս Զայլի Եզդայրները (տե՛ս Ge II, 5-5):

արեւելագետ Մարսիմիլիան Քիտներին, որը լույս է տեսել Անաստաս Մարիի «*ditto princeps*»-ից երկու տարի հետո՝ 1913 թ. Վիեննայում (տե՛ս Bittner):

Եզդիական սուրբ գրքերը խիստ հսկողության տակ պահվում են Լալեշում հատուկ տուփի մեջ, Հասարակ եզդիներին, մանավանդ ալադավաններին, չի թույլատրվում տեսնել դրանք: Եթե չլինեք Անաստաս Մարիի համառությունը, որը կաշառելով միտի (եզդի հովվապետի) ծառային, ձեռք բերեց դրանց պատճենը, մեր իմացությունը այսօր այդ գրքերի մասին կլինեք ՄԻՄ դարի վերջերի մակարդակի վրա:

Չափազանց փոքրածավալ, բայց ուշագրավ և մեծ հետաքրքրություններ կայացնող այս գրքերը պարունակում են եզդիական դավանանքի հիմնական սկզբունքների համառոտ շարադրանքը: Դրանցից առաջինը կոչվում է *Kiteh-i Lalwa* «Գիրք հայտնության» (այսուհետև՝ Գ2), Այն ամբողջովին նվիրված է Մալաթ-Թավուսին, փաստորեն հանդիսանալով նրա մենախոսությունը: Նա կոչ է անում իր համայնքին՝ չլքել շիտակ ճանապարհից և չհրապուրվել հարևան ալադավանների կրոնական գաղափարներով: Իր երկրպագողներին նա բարիք և փառք է խոստանում, իսկ անհնազանդներին՝ սպառնում:

Երկրորդ գիրքը կոչվում է *Maşhâf-(i) raş* «Սև մատյան» (այսուհետև՝ ՍՄ), նրանում շարադրվում է հիմնականում աշխարհի արարչագործությունը և ընտրյալ ժողովրդի՝ եզդիների առաջացումը: Այստեղ զգալի է Աստվածաշնչի և ընդհանրապես Միջագետքի դիցաբանության և տեղական հավատալիքների, ինչպես նաև սուֆիական գաղափարախոսության ազդեցությունը: Իսկ ինչու է այս գիրքը կոչվում «սև», դրա համար գիտական որևէ հիմնավորում դժվար է գտնել (հմտ. տարբեր կարծիքների տեսությունը՝ *Damlūji*, 117—118. *Dyōđi*, 144. նաև՝ *Семенов*, с. 60):

Այս գրքերի հեղինակային պատկանելության և թվագրման խնդիրները նույնպես առ այսօր պարզաբանված չեն (հմտ. *Damlūji*, 116, 125. *Dyōđi*, 143—144): Այնուհանդերձ, ամենայն հավանականությամբ (եղնելով տեքստերի լեզվական առանձնահատկություններից), դրանք բավական ուշ ծագում ունեն:

Եզդիական սուրբ գրքերը ավանդված են երկու տարբերակով՝ քրդերեն և արաբերեն: Պետք է ենթադրել, որ սկզբնական բնագիրը եղել է քրդերենը, իսկ արաբերեն տարբերակը ածանցված է նրանից: Դա է վկայում վերջինիս համառոտ բնութիւնը:

* * *

Ստորև ներկայացվող գրքերի հիմնական բնագրի լեզուն, ինչքան էլ զարմանալի թվա, ոչ թե քրդերենի կուրմանջի բարբառն է, որով խոսում են եզդիները, այլ՝ հավանաբար մուկրիին մոտ կանգնած մի քարբառ: Սույն տեքստերի լեզվին Մ. Քիտները ժամանակին իր հրատարակության մեջ նվիրել է մի պարագրաֆ (տես՝ Bittner, 66—82), որտեղ ընդհանուր գծերով ներկայացրել է այդ լեզվի քերականությունը: Հարկ չհամարելով կրկնել արդեն ասվածը, ցանկանում ենք լուրջ ընթերցողների ուշադրությունը հրավիրել բնագրի լեզվի մի քանի կարևոր առանձնահատկությունների վրա, որոնց Մ. Քիտները կամ չի անդրադարձել, կամ էլ շոշափել է հպանցիկ ձևով:

Եզդիական գրքերի լեզուն, անկասկած, պատկանում է քրդերենի հարավային բարբառների թվին, և, ինչպես նշվեց, մոտ է մուկրիին: Սակայն առավել մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն զուրկ չէ նաև կուրմանջիին հատուկ տարրերից: Օրինակ, կարելի է հիշատակել՝ 1) տեղ ցույց տվող -*da* հետդրի (<հին իրան. **antar-*) օգտագործումը, հմտ. *li-peš-da* «այնուհետև» (բառացի՝ «վերջում, վերջից») (Գ2, 3). 2) ներկա շարունակական ժամանակի կազմության համար *di/a*-բայական նախածանցի օգտագործումը (Գ2 I, 2, 3, 6, 10, 11. II, 4), որը հատուկ է հյու-

սխալին բարբառների խմբին (<հին իրան. *hadā- -Vahman—Asatrian, 13, 93;՝ a--ին զագահն (ԳՂ I, 1, 5, 8), որը տարածված է հարավային բարբառներում (<հին իրան. *a|wa- -Vahman—Asatrian, ibid.):

ԳՂ-ի և ՄՄ-ի լեզվի առավել հետաքրքիր կողմը բառային կազմն է, որը պարունակում է եզդիների ներկայիս լեզվում ամբողջովին բացակայող մի շարք յուրահատուկ միավորներ: Սրանք կարևոր են նաև իրանական բարբառների բառապաշարի համեմատական ուսումնասիրության համար: Հմմտ. 1) bard «քար» (ՄՄ, 12) (<հին իրան. *wrtta- կամ *wartaka—Morgenstierne, 160) vs. եզդիների լեզվի (այսուհետև՝ ե՛լ) kavir (<*kamar), հմմտ. բաշալանի kamar «քար», պրսկ. kūh-o-kamar «սար ու ձոր»։ 2) dandūk «կուռց» (ՄՄ, 19) vs. ե՛լ niqil, հմմտ. պրսկ. nuk, սողդ. nwk. 3) dūkal «ծախ» (ՄՄ, 30) vs. ե՛լ dū. 4) hatav «արև» (ՄՄ, 10, 33) vs. ե՛լ tav (առաջին ձևը առաջացել է հին իրան. *apa-tāpa- ձևից, երկրորդը՝ *tāpa- -ից)։ 5) hil-sān «բարձրանալ, համբարձվել» (ՄՄ, 33) vs. ե՛լ rā-bū (առաջին ձևը, ըստ Մ. Բիտների, hil-stān ձևի տարբերակն է (Bittner, 65), այնինչ, մեր կարծիքով, այն հունգում է հին իրան. *rdwa-san- նախաձևին (հմմտ. *san- «բարձրանալ», մանիք. միջին պրսկ. s(')n-, sdn). ե՛լ ձևը առաջացել է հին իրան. *frā-baw- նախաձևից)։ 6) kalašir «քաղաղ» (ՄՄ, 24) vs. ե՛լ dīk (<արար. dīk). 7) kēw «սար» (ՄՄ, 16, 30) vs. ե՛լ cī (ՄՄ-ի ձևը առաջացել է հին իրան. *kaufa- -ից, ե՛լ-ը՝ *čakat ձևից, հմմտ. հայերեն նախադասություն)։ 8) māng «լուսին» (ՄՄ, 12) vs. ե՛լ hīv (տես մանրամասն՝ Vahman—Asatrian, 115). 9) mar «ոչխար» (ՄՄ, 24) vs. ե՛լ barx (հրկուսն էլ հին իրան. *warnaka- ձևի տարբեր արտացոլումներն են)։ 10) nārdin «ուղարկել» (ԳՂ, 2, I, 4) vs. ե՛լ šandin (առաջինը հանգում է հին իրան. *ham-dāra- ձևին (Emmerick, 141), երկրորդը՝ հին իրան. *šan-ին (Vahman—Asatrian, 88). 11) sa/ik «փոր» (ՄՄ, 11, 19), vs. ե՛լ zlk, հմմտ. պրսկ. šik-am (<հին իրան. *skamb-?). 12) šit «բան» (ԳՂ IV, 4) vs. ե՛լ tišt և այլն:

ԳՂ և ՄՄ գրքերի ստորև առաջարկվող թարգմանությունը առաջին փորձն է ներկայացնելու հայ ընթերցողին եզդիական ուսմունքի հիմնագրությունների այս երկու փոքրիկ գրավոր ժողովածուները: Այն իրականացվել է Մ. Բիտների հրատարակությունից (որը, ինչպես ասվեց, ամենալիակատարն է): Հիմք է ընդունված «գրքերի» քրդերեն բնագիրը, սակայն հաշվի ենք առել նաև նույն հրատարակության մեջ ներկայացվող արաբերեն տարբերակի տեքստը:

ԳԻՐՔ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

Նախաբան

1. Նա, ով գոյություն է ունեցել բոլոր արարածներից առաջ, Մալաթ-Թա-վուան է:

2. Նա է, որ այս աշխարհն ուղարկեց Արթավուսին², որպեսզի [վերջինս] իր ընտրյալ ժողովրդին առանձնացնի և [պարգևի] իմացություն, ու փրկի վախից և մոլորությունից:

3. Այս գործի երևան գալը եղավ (կատարվեց) բանավոր երես առ երես [հաղորդմամբ], այնուհետև՝ այս գրքի միջոցով, որը կոչվում է Ջալվա³,

² Նշանակում է Թավուսի, այսինքն Մալաթ-Թավաուի ծառա՝ արար.

ձևից, Բնագրում՝ عبطاودس

³ Այսինքն «Հայանություն»՝ արար. جلوه

որի ընթերցումը արգելված է այս համայնքից⁴ դուրս կանգնած [մարդկանց] համար:

Մաս առաջին

1. Ես եզել եմ և այժմ կամ և կմնամ հավիտյանս հավիտենից: Ես իշխում եմ բոլոր արարածներին⁵ վրա և կարգավորում եմ նրանց գործերը:

2. Ես պատրաստ եմ. ես բարի եմ նրանց համար, ովքեր հավատում են ինձ և կարիքի դեպքում⁶ դիմում են ինձ:

3. Ես ամեն տեղ եմ⁷: Ես մասնակից եմ բոլոր իրադարձություններին, որոնց այլադավանները «չարիք» են համարում, քանզի դրանք չեն համապատասխանում նրանց ցանկություններին:

4. Յուրաքանչյուր ժամանակ ունի իր կարգավորիչը և դա իմ խորհրդով է: Յուրաքանչյուր ժամանակ ուղարկում է⁸ որևէ տիրակալի⁹ [և] այդ տիրակալներից յուրաքանչյուրը իր դարաշրջանում կատարում է իր գործը:

5. Ստեղծված արարածներին թույլ եմ տալիս [անել այն, ինչ ցանկանում էն]:

6. Պարտվում է նա, ով ինձ հակադրվում է:

7. Ուրիշ աստվածները չեն խառնվում իմ գործին. ինչ ցանկանամ նրանք ինձ չեն հակադասուի:

8. Այն գրքերը, որոնք այլադավանների ձեռքերին են, դրանք ճշմարիտ չեն և գրված չեն մարգարեների կողմից, [այլ] կեղծված են և աղճատված: Յուրաքանչյուրը կրկնում է մյուսին [և] ժխտում:

9. Ճշմարտությունն ու կեղծիքը հայտնի են փորձից:

10. Ես զայրանում եմ նրանց վրա, ովքեր իմ անունից են խոսում: Անհամաձայնությունս արտահայտվում է իմ կողմից մի քանի օրով ուղարկված իմաստուն կարգադրիչների միջոցով: Ընդհանրապես [իմ կարծիքով ոչ ճիշտ] կատարված գործերը ես արգելում եմ:

11. Ես ուղի եմ ցույց տալիս և ուսուցանում եմ նրանց, ովքեր հետևում են իմ աշակերտներին¹⁰, [Այդ մարդիկ] երջանիկ կլինեն՝ դառնալու իմ ուղեկիցները:

⁴ Ի նկատի ունի եզդիների համայնքը:

⁵ Եզդիական բնագրում առկա է **أفرينند** բառը, որը ավելի շուտ պետք է թարգմանել «ստեղծող, արարիչ», սակայն մենք ելնում ենք արարեբն տարբերակի տեքստից, որտեղ հանդես է գալիս **خلقت** «արարածներ» բառը: Եզդիական բնագրի ներկայացնում է, հավանաբար, պարսկերեն **آفرینند** «արարած» բառի սխալ վերարտադրությունը:

⁶ Քրդերեն **ئیش** **W.** Բիտները թարգմանում է **im Augenblicke des Werkes** (Bitner, 13), որը ճիշտ չէ. այն պետք է հասկանալ «գործի ժամանակ, կարիքի դեպքում և այլն»: Հմտ. արաբ. տարբերակի **حين الحاجة** «կարիքի միջանակ»:

⁷ Բառացի՝ «ոչ մի տեղ ինձանից դատարկ չէ»: Սա սուֆիական պանթիստական գաղափարախոսության առանձնահատուկ տարրերից է, ըստ որի աստված սփռված է ամենուր:

⁸ **W.** Բիտները թարգմանում է բայի կրավորական սեռի ձևով՝ **wird... gesandt** (Bitner, 15)՝ «այնինչ պետք է քրդերեն **da-nêra** ձևը հասկանալ ներգործական իմաստով՝ «ուղարկում է»:

⁹ Այս բառը թարգմանվում է ըստ արարեբն բնագրի (**رئيس**), իսկ քրդերենում առկա է **گوره** (**gawra**) «մեծ»:

¹⁰ Բառացի՝ «նրանց, ում ես սովորեցրել եմ» (**کە ھەم ڕێڕێتم کردووە**):

Մաս երկրորդ

1. Մարդկանց բարութիւնն եմ շնորհում ըսա իմ հայեցողութեան:
2. Ես իշխում եմ երկրի ու նրա խորքում գտնվող բոլոր [արարածներին] վրա:
3. Ես չեմ ցանկանում, որպեսզի մարդիկ ընդհարվեն (կռվեն) միմյանց հետ:
4. Եվ ես բոլոր դեպքերում բարութիւնն չեմ խնայում նրանց համար, ովքեր ինձ են պատկանում և հնազանդում են ինձ:
5. Ես գործ եմ տալիս նրանց, որոնց փորձել եմ և որոնք իմ ցանկութեամբ են շարժվում:
6. Ես հայտնվում եմ որևէ տեսքով նրանց, ովքեր հավատում են ինձ և խորհրդակցում են ինձ հետ:
7. Ժամանակ առ ժամանակ ես մարդկանց ենթարկում եմ տանջանքի, [և] ոչ ոք չի կարող դա ինձ արգելել:
8. Եվ ոչ ոք չի կարող դրան միջամտել:
9. Տանջանք և հիվանդութիւնն եմ բերում նրանց, ովքեր բիմադրում են ինձ:
10. Նա, ով ինձ է ուղղված (ինձ է հետևում), չի մեռնում ինչպես ուրիշ մարդիկ:
11. Ես չեմ հանդուրժում, որ որևէ մեկն ապրի այս աշխարհում իրեն հատկացված ժամանակից ավելի:
12. Եթե ցանկանամ, որևէ մեկին հոգու շրջագայութեան (տրանսմիգրացիայի) միջոցով մեկ կամ երկու-երեք անգամ այս կամ մի այլ աշխարհ կուղարկեմ:

Մաս երրորդ

1. Առանց գրքի ճանապարհ եմ ցույց տալիս (առաջնորդում եմ) նրանց, ովքեր ինձ հաճո են և ինձ են նայում: [Ես] աներևույթ կերպով դեկավարում եմ նրանց: Ինչ էս ձեզ սովորեցնում եմ, [ձեռք է բերվում] առանց տանջանքի¹¹:
2. Ժամանակ առ ժամանակ ես վնաս եմ բերում նրանց, ովքեր այլ աշխարհում են և խուսափում են իմ կրոնից:
3. Աղամի այդ զավակները չգիտեն կրոնի ընթացքը (օրենքը) և դրա համար հաճախ շեղվում են [ուղիղ] ճանապարհից:
4. Ցամաքի կենդանին, երկնի աղավնին և ծովի ձուկը՝ բոլորը իմ ձեռքում են և գտնվում են իմ հրամանի ներքո:
5. Ես գիտեմ ստորերկրյա գանձերի տեղը և [դրանք] մեկ առ մեկ տալիս եմ մարդկանց:
6. Իմ հրաշքները ցուցադրում եմ այն մարդկանց, ովքեր ցանկանում են [տեսնել] դրանք:
7. Այն օտարները, ովքեր չարութիւնն են գործում և չեն վարվում ըստ իմ և իմ հետևորդների խոսքերի, վնաս պետք է տեսնեն, քանզի չգիտեն, որ մեծութիւնն ու հարստութիւնը իմ ձեռքերում են, և ես տալիս եմ դրանք՝ Աղամի որդիներից լավագույններին:
8. Աշխարհի ստեղծումը¹², օրերի հաջորդականութիւնը և բոլոր կարգավորիչների կարգավորողը ի սկզբանե ինձանից են¹³:

¹¹ Հմմտ. «...was ich euch lehre, hat keine Mühsal in sich» (Bittner, 19):

¹² Բառացի՝ «աշխարհի համապարփ ընկնելը» (ریک خاستن عالمان):

rēk xistin «համապարփ(վ)ելը»:

¹³ Այս համաձայն Մ. Բիտների թարգմանի է հեռույդ կերպով. «Von früherher ist die Richtung des einen Weges der Welten und die Umdrehung der Tage und der da cin setzt alle, die ihre Sache durchfuhren. von mir her» (Bittner, 21):

Մաս չորրորդ

1. Իմ իրավունքը ես չեմ հանձնի այլ աստվածներից որևէ մեկին:
2. Չորս տարրերը, չորս ժամանակները և չորս հիմքերը ես նվիրեցի, որպեսզի կատարվի արարչագործությունը¹⁴:
3. Օտարների գրքերը ընդունելի են, եթե համապատասխանում են իմ օրենքին: Այն [դիրքը], որը չի համապատասխանում իմ օրենքին, նրանց կողմից փոխված է [աղավաղված է]¹⁵:
4. Իմ թշնամիները երեքն են, և իմ շարունակները երեք բանի վրա է:
5. Նրանց, ովքեր չեն հայտնում իմ գաղտնիքը, բարիք է հասնելու:
6. Նրանք, ովքեր տանջվում են հանուն ինձ, յուրաքանչյուրին որևէ աշխարհում ես բարությունս կհատուցեմ:
7. Օտարների դեմ պայքարում ես կկանգնեմ նրանց կողքին, ովքեր ինձ են հարում¹⁶:
8. Ո՛վ, դուք, մարդիկ, որ իմ ճշմարտությունը ձեր ականջներով եք ընկալում, հեռացե՛ք այն խոսքերից, որոնք ինձանից չեն: Իմ անունը և իմ հատկությունները մի՛ հիշատակեք, որպեսզի մեղք չգործեք¹⁷: Դուք չգիտեք ինչ են անում [շիտակ] ճանապարհից շեղվածները:

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1. Իմ էությունն ու պատկերը պահեք ձեր մտքում, քանի որ դա [կօգնի] ձեզ մտաբերել իմ օրենքից այն, ինչ մոռացության է մատնվել:
2. Իմ ծառաների խոսքերով առաջնորդվեք. ականջ արեք այն գերբնական գիտությանը, որ իմ անունից [նրանք] ձեզ հայտնում են:

Հայտնության գիրքը ավարտված է

ՍԵՎ ՄԱՏՅԱՆ

1. Ի սկզբանե աստված իր բարի¹⁸ էությունից¹⁹ ստեղծեց մի սպիտակ մարգարիտ (գոհար)²⁰, և ստեղծեց մի աղավնի, որին տվեց Անֆար²¹ անու-

¹⁴ Մ. Բիտների թարգմանությամբ «...um die Werke der Schöpfung zustandezubringen» (Bittner, 21):

¹⁵ گوربوانه (gōriwayāna) «փոխված նրանց կողմից» (հմմտ.՝ կուրմանջի guher(-in), «փոխել» <հին իրան.՝ *wi-iar-) <gōrī—անցյալ կրավորական դերբայ՝ -(a)wa-ածանցով և -vān երրորդ դեմքի հոդ. էնկլիտիկ դերանունով:

¹⁶ Մ. Բիտների թարգմանությամբ. «Zum Strette gegen die Fremden will ich mich zu jenen, die mir anhangen, stellen auf eine Seite» (Bittner, 23):

¹⁷ Եզրական դավանանքում Մալաք-Թավուսի անունը արգելվում է տալ. դա մեղք է համարվում:

¹⁸ خوشه و... (Sirr) հարավային քրդերենում նշանակում է «սիրելի». այդպես է թարգմանում նաև Մ. Բիտները՝ «geliebte, սակայն, մեր կարծիքով, այստեղ ավելի հարմար է թարգմանել բարի»:

¹⁹ Արար. سر (Sirr) նշանակում է «գաղտնիք»: Այս բառը ծայրահեղ շիական (սուֆիական) կոսմոգոնիայում արտահայտում է աշխարհի արարչագործությանը նախորդող մոտավորապես մի այնպիսի իրավիճակ, երբ աստծու էությունը չբյուրեղացած ձևով տարածված էր ամբողջ տիեզերքում (տե՛ս Жуковский, с. 9. Mokri 1966, 19):

²⁰ مهر «մարգարիտ, աղամանդ», սկզբնապես նշանակել է «էություն» (հմմտ. նրա արաբականացած ձևը مهر «թաղանթ» և ծագում է միջին իրան. mēhr «էություն» բառից (<հին իրան. *g aw(a)θra- ձևից): Գոհարի (արար. durrah) դերը, ըստ ծայրահեղ շիական դադափարա-

²¹ Sē և հաջորդ էջում:

նը, և նրա մեջքին դրեց այդ մարգարիտը, որը այդտեղ մնաց քառասուն հազար տարի:

2. Կիրակին արարչագործության առաջին օրն էր: [Աստված] ստեղծեց մի հրեշտակի, որին տվեց Ազրաիլ անունը: Դա Մալաք-Թալուին էր, որը բոլորի առաջնորդն է:

3. Երկուշաբթի օրը [աստված] ստեղծեց Դարդայի հրեշտակին, որը Շելիս Հասանն էր²²:

4. Երեքշաբթի օրը նա ստեղծեց Իսրաֆիլ հրեշտակին, որը Շելիս Շամսըն²³ է:

5. Չորեքշաբթի օրը նա ստեղծեց Միքայիլ հրեշտակին, որը Շելիս Արուբարըն է:

6. Հինգշաբթի օրը նա ստեղծեց Ջաբրայիլ (Գաբրիել) հրեշտակին, որը Սըշադդինն է:

7. Ուրբաթ օրը նա ստեղծեց Շամելայիլ հրեշտակին, որը Նասուր-ինն է:

8. Շաբաթ օրը նա ստեղծեց Թուրայիլ²⁴ հրեշտակին, որը Ֆախրադդինն է:

9. [Եվ] նա Մալաք-Թալուին կարգեց բոլորի ղեկավար:

10. Այնուհետև նա ստեղծեց յոթ երկինքների և երկրի և արևի և լուսնի պատկերը:

11. Ֆախրադդինը ստեղծեց մարդուն, կենդանիներին, թռչուններին և վայրի գայլերին, և տեղադրեց դրանք իր վեղարի գրպանում²⁵: Եվ [մյուս] հրեշտակների հետ դուրս եկավ մարգարիտի միջից: [Այնուհետև նա] մի ահեղ ճշգրտակեց մարգարտի վրա, [որը] բաժանվեց չորս մասի և նրա միջից²⁶ շուր հոսեց²⁷ և ծով գոյացավ: Երկիրը կլոր և առանց անցքի²⁸ էր:

Խոստովյան, լավադանց մեծ է արարչագործության մեջ: Այն խորհրդանշում է նաև հոգու ծնունդը, իմացության ձեռք բերումը և այլն: Ան-Է-Ֆալիլ աղանդավորների շրջանում, և ընդհանրապես իրանական իրականության մեջ, մարգարիտը հանդես է դալիս նաև որպես կուսության և անմեղության խորհրդանշելու, Իսկ մարգարիտի պատյանը (արաբ. šadaf) խորհրդանշում է տեղեկություն (տե՛ս մանրամասն՝ Минорский, с. 63, 61. Mokri 1966, 16—19):

21 Արաբ. انشور հալանարար նշանակում է «հեղ, երկչոտ» (Bittner, 54):

22 Շելիս Հասանը, ինչպես նաև ստորև հիշատակվող անձինք (բացի Շելիս Շամսից—տե՛ս հաջորդ ծան.) պատմական դեմքեր են՝ աղավիյան շարժման գործիչներ:

23 Երկրական դավանաբանության մեջ Շելիս Շամսը մարմնավորում է արեւը (արաբ. šamṣ). իսկ Շելիս Մինը՝ լուսինը: Վերջինս եղգիական կրոնական ավանդույթներում նույնացվում է նաև ֆախրադդինի հետ (տե՛ս հոդվ. 8, 11):

24 Արաբական տարգերակում՝ (نورائيل) Նուրայիլ: Հնդհանրապես պետք է նշել, որ ՍՄ-ի այս յոթ աստվածությունները՝ Մալաք-Թալուսի գլխավորությամբ, հայտնի են հրեական և արաբական ավանդություններից, իսկ նման հաջորդականությունը (չնչին շեղումներով) հանդես են դալիս նաև ծայրահեղ շիական աղանդավորների հավատալիքներում (տե՛ս Минорский, с. 62, 64, 81. Mokri 1966, 22—26. Mokri 1974, 29—30): Ցոթ հրեշտակ-աստվածությունների ստեղծումը այս տեքստում հիշեցնում է Ահուրա Մազդայի կողմից վեց ամշասպանների արարման դրադաշտական ավանդությունը:

25 گير فان (girīān) «միջին իբան». *griv-pan, որտեղից հայերեն զրպան:

26 Բառացի՝ «փոքրից» (سكى /li sikē/):

27 Իր առաջին ստեղծագործությունը ավարտելուց հետո, —պատմվում է ծայրահեղ շիական ավանդություններից մեկում, —աստված իր հայացքը հռոնց մարգարիտի վրա, և հանկարծ ճալթեց կայծակը, փայլատակեց և փշրվեց մարգարիտը, որից դուրս հոսեց աստվածաշուքայան լույսը (Mokri 1966, 19):

28 Դրդ. کن (kun) «տնք, հեռանցք» բառը ձագում է հապառաբար հին իրանական *ku-na- ձևից, հմմտ. քրդ. kōn «վրան» < *kau-na- (բառացի՝ «փոքրած»):

12. Նա թռչնի տեսքով ստեղծեց Ջաբրայիլին և ուղարկեց՝ նրա ձեռքը տալով [աշխարհի] շորս անկյունները: Այնուհետև նա ստեղծեց մի նավ և դրեց ջրի վրա՝ երեսուն հազար տարով: Այնուհետև նա եկավ և բնակվեց Հալեշում²⁹: Նա բղավեց և երկրին ամրացրեց բարեր, և երկիրը դարձավ հող³⁰ և սկսեց ցնցվել: Նա հրամայեց Ջաբրայիլին, և եղա՝ հանդարտություն: Մարգարտի երկու կտորները բերեց և մեկը տեղադրեց երկրից ներքև, իսկ մյուսը՝ երկնքի դռանը: Այնուհետև դրանցից³¹ կախեց լուսինը, արևը և աստղերը, որոնք նա ստեղծեց սպիտակ մարգարտի փշուրներից [և] կախեց դրանք՝ երկնքի զարդարման համար:

13. Բերքատու ծառերը և բույսերը և լեռնազապթները նա ստեղծեց երկրի զարդարման համար: Այնուհետև նա ստեղծեց երկնքի գահը երկրի գորգի վրա:

14. Մեծ աստվածն ասա՛ց հրեշտակներին. «Նա ստեղծում եմ Ադամին և Եվային և նրանց մարդ կդարձնեմ. Ադամի էությունից³² կառաջանա Շահր ըին Սաֆար³³, և նրանից կսերի երկրի վրա մի ժողովուրդ, որից հետո Ազրայիլի, այսինքն՝ Մալաք-Թավուսի ժողովուրդը, որը եզդի [ազգն] է, ի հայտ կգա»:

15. Այնուհետև [նա] Շամ երկրից³⁴ Հալեշ ուղարկեց Շեյխ Ադիին:

16. Այնուհետև աստված իջավ Սև լեռան³⁵ վրա և բղավեց³⁶ ու ստեղծեց երեսունհազարանոց հրեշտակների բազմությունը, որոնք քառասուն³⁷ տարի պաշտեցին նրան: Ապա [աստված այդ հրեշտակներին] հանձնեց Մալաք-Թավուսին և նրանց հետ միասին համբարձվեց երկինք:

17. Ապա աստված իջավ սուրբ երկիր [և] հրամայեց Ջաբրայիլին՝ հող բերել աշխարհի շորս անկյուններից, [և] նա ստեղծեց հող և քամի և կրակ և ջուր, և շնորհիվ իր զորության հոգի ներշնչեց [հողին և ստեղծեց Ադամին] և հրամայեց Ջաբրայիլին՝ տանել նրան դրախտ, [և թույլ տալ] ճաշակելու բոլոր ծառերի [պտուղներից], բացի ցորենից:

18. Հարյուր տարի հետո Մալաք-Թավուսը աստծուն ասաց. «Ինչպե՞ս է բազմանալու Ադամի սերունդը»: Աստված ասաց. «[Այդ գործի] կարգավորումը հանձնել եմ քեզ»: [Եվ Մալաք-Թավուսը] եկավ [և] ասաց Ադամին. «Դու ցորեն կերե՞ս ես»: [Ադամն] ասաց՝ թոշ, քանզի աստված ինձ արգելեց: [Մալաք-Թավուսն] ասաց՝ չեկեր, դա քեզ համար լավ է: [Ցորենը] ուտելուց հետո [Ադամի] փորը ուռեց: Մալաք-Թավուսը նրան վտարեց դրախտից, տեղում ձգեց և համբարձվեց երկինք:

19. Ադամը [սկսեց] նեղվել, որովհետև հետանցք չունեի: Աստված մի

²⁹ Ջեռադրում՝ ܝܠܝܬ (Lāyēš):

³⁰ Այսինքն՝ ստացավ իր ավարտուն ձևը:

³¹ Հավանաբար՝ Երկնքից:

³² Տե՛ս ծան. 19:

³³ Այս կերպարի ինքնությունը չհաշտվեց պարզել:

³⁴ Այսինքն՝ Սիրիայից:

³⁵ Հավանաբար այստեղ մենք գործ ունենք աստվածաշնչային ավանդության մի այլ տարբերակի հետ, և, հետևաբար, այս լեռը պետք է նույնացնել Ջուդի՝ պատմական Կոհնայի նահանգի Արարադ լեռան հետ:

³⁶ Բղավելը, ինչպես նաև ծիծաղը, առասպելաբանության մեջ պարունակում են կյանքի կոչելու գաղափարը և խորհրդանշում են պտուղություն, բերքատվություն և առատություն (մ.թ.ա. Πρῶτον): Հետաքրքրական է նշել այս կասկածությունը, որ Իրանի ֆերիա գավառի հայերի շրջանում թթու դեղից առաջ տա՛հառը, կամ կեռուճը փուլի հս, երեխաներին ապրսպըրում են, որպեսզի նրանք բղավեն: Հավատում են, որ զա կօհանդակի թթվի շուտ հասնելուն և կրթելավի դրա որակը:

³⁷ Արաբերեն բնագրում՝ քառասուն հազար:

աղանի ուղարկեց նրա մոտ, [որը] իր կտուցով անցք բացեց [նրա հետույքում], [և] նա հանգստացավ:

20. Զաբրայիլը հարյուր տարով [Ադամից] հեռու էր: Նա հարյուր տարի վշտի մեջ էր:

21. Աստված հրամայեց Զաբրայիլին, [որը] եկավ և ստեղծեց Եվային՝ Ադամի ձախ կողից:

22. Ապա Մալաք-Թավուսը իջավ երկրի վրա՝ հանուն մեր ժողովրդի: Բացի ասորական թագավորներից մի քանի այլ թագավորներ էլ մենք ունենք, որոնք են՝ Նաշրուհ, որը Նասրադդինն է, և Գամբուշ, որը Ֆախրադդինն է, և Արտեմուշ, որը Շամսադդինն է: Եվ դրանից հետո մենք ունեցանք [ևս] երկու թագավոր՝ Շաբուր առաջին և [Շաբուր] երկրորդ: Նրանց իշխանությունը տևեց հարյուր հիսուն տարի³⁸, նրանց սերնդից են առաջացել մեր մեծերը մինչև այժմ:

23. Եվ մենք զայրացած ենք չորս թագավորների վրա³⁹:

24. Մեղ համար արգելված է՝ ա) Հազար [բույսը], որովհետև նրա անվանումը համընկնում է խասիա մարգարեուհու անվան հետ⁴⁰: բ) Եվ լոբին: դ) Եվ կապույտ գույնը: դ) Զուկը նույնպես մի ուտի՝ ի պատիվ Հովնան մարգարեի: և) Եղնիկի [միսը] մի ուտի, քանզի այն մեր մարգարեներից մեկի ոչխարն է: զ) Եվ շեյխն ու իր աշակերտները բոլորովին աքաղաղի միս չպետք է ուտեն՝ ի պատիվ Մալաք-Թավուսի, [որովհետև] Թավուսը մեկն է հիշատակված այն յոթ աստվածություններից, որի տեսքը նման է աքաղաղի: է) Եվ շեյխն ու իր աշակերտները դոդմ չպետք է ուտեն: ը) [Արգելված է նաև] կանգնած միգել: թ) Նստած տաբատ հագնելն անթույլատրելի է: ժ) Բնական կարիքը հոգալ զուգարանում նույնպես արգելվում է: ի) Նաև՝ լողանալ բաղնիքում: լ) Ծիշտ չէ սառնանա բառն արտասանելը, քանզի դա մեր աստծու անունն է: ճիշտ չէ, երբ մենք օգտագործում ենք այնպիսի բառ, որ նման է կայքան (պարան), շաք (գետ) և շառ (չարիք) բառերին⁴¹. ճիշտ չէ օգտագործել մալրուն (անիծված) բառը⁴². Նաև ճիշտ չէ խոսքի մեջ օգտագործել լալենա (անեծք) և նալը (պայտ)⁴³ բառերը⁴⁴:

38 Այստեղ յուրահատուկ ձևով փորձ է արվում հնացնելու եզդիների ծագումնաբանությունը: Հիշյալ կերպարների մասին մանրամասն տե՛ս Bittner, 60 նաև 63:

39 Զի նշվում, թե ովքեր են դրանք և ինչու են եզդիները զայրացած դրանց վրա:

40 Արաբ. خاس (xass) նշանակում է «հազար (բույս)»: Իսկ Խաթա-ն հավանաբար մտացածին կերպար է:

41 Որովհետև դրանք պարունակում են շալքան (արաբ. شيطان «սատանա») բառի առանձին հանգեր:

42 Որովհետև անեծքը եզդիների մոտ արգելվում է (հմտ. Ժան. 44, հոդված 5):

43 Քրդերը արաբ. لا'نا «անեծք» բառը արտասանում են դրափոխությամբ՝ لا'ن'نا, որը համընկնում է na'li «պայտ» բառի հետ:

44 Եզդիական բարոյական կողմերը իր ամբողջական արտահայտությունն է գտել 1873 թ. եզդի հոգևորականության՝ Օսմանյան կայսրության Բարձր Դուսնը ուղղված դիմում-խնդրագրի տեքստում: Ինչպես հայտնի է, սուլթան Աբդուլ Ազիզի նույն թվականի հրամանի համաձայն, նախատեսվում էր դիմվորական ծառայության կանչել նաև եզդիներին, որոնք մինչ այդ ազատված էին զինծառայությունից: Դրանից խուսափելու համար, հոգևորականները կազմում են մի դիմում և հավելվածում թվարկում եզդիական կրոնական դրույթները, որոնք, ըստ նրանց, անհամատեղելի են բանակում գտնվելու հետ: Վերևում բերված ՍՄ-ի նյութը կարելի է լրացնել այս փաստաթղթի տվյալներով: Այն համառոտված ձևով ներկայացվում է ըստ Dincer, 208—210 և Işık, 136—139:

Հաջված 1-ին: Մեր եզդիական համայնքի յուրաքանչյուր անդամ, մեծ թե փոքր, տղամարդ թե կին, տարեկան երեք անգամ ապրիլ, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին պարտավոր է ձևավորվել այցելել Մալաք-Թավուսին: Հակառակ դեպքում՝ նա կհամարվի անհավատ:

25. Քրիստոսի հայտնութիւնից առաջ այս աշխարհում մեր կրոնը կոչւում էր կռապաշտութիւն: Հրեաները, քրիստոնյաները և մահմեդականները հակադրվեցին մեր կրոնին: Իրանցիները՝ նույնպէս:

26. Ահարը⁴⁵ մեր թագավորներից էր: Նա: հրամայեց յուրաքանչյուրիս, որպեսզի մենք նրան հատուկ անուն դնենք: Եվ կընցին նրան Ահար-աստված կամ՝ Բաբլըրուր (Բէնդզեքուր), որը այժմ Փիրբուրն է⁴⁶:

27. Մենք ունեինք մի թագավոր Բաբելոնում, որի անունն էր Բուխտնասար (Նաբուգոդոնոսոր): Եվ Իրանում մի թագավոր ունեինք՝ Ախաշվերոշ (Քսերքսես) անունով: [Եվ] Կոստանդնուպոլսում մենք ունեինք մի թագավոր՝ Ագրինկալոս (Արկադիոս) անունով⁴⁷:

28. Երկրի և երկնքի [ստեղծումից] առաջ աստված գտնվում էր ծովի

Հոգիւմ 2-րդ: Մեզանում յուրաքանչյուրը, եթե ամեն տարի սեպտեմբերի 15—20-ը շնորհակցի Շեյխ Ադիի տոնակատարութեանը, համարվում է անհավատ:

Հոգիւմ 3-րդ: Յուրաքանչյուր եզդի ամեն օր արեւածագին պետք է ծնկաչոք աղոթի արեւի գիպած տեղում, այն պայմանով, որ նրան չպետք է տեսնի որեւէ մահմեդական, քրիստոնյա կամ հրեա:

Հոգիւմ 4-րդ: Մեր համայնքի յուրաքանչյուր անդամ ամեն օր պետք է համբուրի իր «հանդերձյալ կյանքի եղբոր» (այգ կրոնական ինստիտուտի մասին տե՛ս մանրամասն՝ Асатрян), շեյխի և փրիի ձեռքը:

Հոգիւմ 5-րդ: Անեծքը, ըստ մեր ուսմանքի, արգելվում է: Եթե մեզանից որեւէ մեկը անեծքի խոսքեր լսի այլադավանի կողմից, նա պետք է սպանի վերջինիս կամ՝ ինքը սպանվի:

Հոգիւմ 6-րդ: Երբ համայնքի որեւէ անդամ մեռնում է, պետք է ներկայանան նրա «հանդերձյալ կյանքի եղբայրը», շեյխը, Փիրը և որեւէ դավալ, որը պետք է արտասանի հետեւյալ գալիլ (աղոթքը)՝ «Ով դու, Մալաք-Թավուսի ծառա, դու պետք է մնաս որպէս Մալաք-Թավուսի հետևորդ: Եթե մեկն ու մեկը այն աշխարհում քեզ ասի. ընդունիր քրիստոնեություն, մահմեդականություն կամ հրեական դավանանքը, հրաժարվի՛ր և մի՛ հավատա: Եթե հավատա, կհամարվես անհավատ:

Հոգիւմ 7-րդ: Ամեն մի եզդի մշտապես պետք է իր գրպանում ունենա օրհնյալ Շեյխ Ադիի գերեզմանից մի բուռ հող, որից մի պտղունց նա պետք է հաշտկի ամեն օր առավոտյան: Եզդին մեռնելիս էլ իր գրպանում պետք է ունենա այգ հողից:

Հոգիւմ 8-րդ: Յուրաքանչյուր եզդի ծնւմ է պահում միայն իր հայրենիքում. ույլ վայրում դա չի կարելի, քանզի այգ օրերին, առավոտյան և երեկոյան, նա պետք է այցելի իր շեյխին կամ փրիին և նրանցից մեկի տանը խմի 2—3 բաժակ գինի:

Հոգիւմ 9-րդ: Եթե եզդիական համայնքի որեւէ անգամ շուրջ մեկ տարի բացեցաւ իր տներից, վերադարձին նա չի կարող ապրել կենդանի և մեզանից ոչ ոք նրան կին չի տա:

Հոգիւմ 10-րդ: Եզդին իր նոր հագուստը անպայման պետք է լվանա օրհնյալ Շեյխ Ադիի գերեզմանի մոտ գտնվող սուրբ ջրում:

Հոգիւմ 11-րդ: Եթե մեզանից որեւէ մեկը ցտեղկեցնում է կտրել նոր վերնաշապիկ: Նրա «հանդերձյալ կյանքի քույրը» պետք է ձեռն օձիքը:

Հոգիւմ 12-րդ: Մեզանում արգելված է կապույտ՝ հագուստը: Ձի թուլատրվում նաեւ սահմանափակ, քրիստոնյայի, հրեայի սանրով, կամ սափրվել նրանց ածելիով:

Հոգիւմ 13-րդ: Եզդին չպետք է մտնի հասարակական զուգարան, բաղնիք. չպետք է օգտագործի օտար դավանանքի տեղ մարդու ճաշի գդալը:

Հոգիւմ 14-րդ: Ինչ վերաբերում է սննդին, ապա մեզ, ի տարբերութիւն ուրիշների, որդեկում է ուտել ձուկ, դդում, բամբակ, լոբի, կաղամբ և հազար (եզդիներին արգելված է նաեւ խոզի միսը, Այն, որ այստեղ դա չի նշված, բացառւում է նրանով, որ խոզի միսը արգելվում է նաեւ ըստ մահմեդական շարիաթի:—Պ. Ա., Ա. Փ.): Մենք չենք ապրում այնտեղ, որտեղ աճեցվում է հազար:

⁴⁵ Աստվածաշնչում հիշատակված հին Հրեաստանի թագաւոր: Аhab (աթագ. 16, 29)։

⁴⁶ SK'a Bittner, 62։

⁴⁷ SK'a Ժան. 38։

վրա՝ նա իր համար մի նալ պատրաստեց և [դրանով] նավարկում էր ծովերի վրա:

29. Ինքն իրենից մի մարգարիտ ստեղծեց և դրա վրա իշխեց բառասուն տարի՝ Ասյա ուտքով հարվածեց դրան:

30. Եվ, ով զարմանք, նրա աղմուկից և ձայնից առաջացան լեռները և փռուց՝ բլուրները, [իսկ] ծխից՝ երկինքը: Եվ նա ամրացրեց դրանք առանց սյուների:

31. Այնուհետև նա կողպեքով փակեց երկիրը և ձեռքը վերցրեց մի դրիշ և սկսեց կազմել բոլոր արարածների [ցանկը]:

32. Ասյա իր էությունից և լույսից նա ստեղծեց վեց աստվածություններ, և դրանց ստեղծումը նման էր մի ճրագից մյուսը վառելուն⁴⁸,

33. Առաջին աստվածն ասաց երկրորդին. «Ես ստեղծեցի Երկինքը միայն: Համարած իր զնա դու երկինք և ստեղծիր որևէ բան»: Նա բարձրացավ [երկինք] և դարձավ Արև: [Նույնը] ասաց [նաև] մյուսին, [եվ] նա բարձրացավ ու դարձավ Լուսին: Զորրորդը ստեղծեց Հորիզոնը, հինգերորդը ստեղծեց Արշալույսը, վեցերորդը՝ Մթնոլորտը:

[Գիրքն ավարտված է]⁴⁹:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատրյան—Փոլադյան—Գ. Ս. Ասատրյան, Ա. Պ. Փոլադյան, Եզդիներ և եզդիականություն.— Երեկոյան Երևան, հոկտ. 20, 21 (1989):

Եզդի—Եզդկայ Կողբացույ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Կանայանց—Ս. Կանայանց, Եզդիներ (Եզդիները և հայերը).—«Տարազ», 1910, հ. 1, էջ 17—18:

Չաչանի—Կ. Ա. Չաչանի. Արժեքավոր վավերագրեր հալ-բրդական բարեկամական կազմերի պատմությունից.—Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, VII. Քրդագիտություն. Երևան, 1975, էջ 226—248:

Սայթ—Նովա—Սայթ—Նովա. Դավթար (Ֆաթսիմիլե). Երևան, 1963:

Амирбекян—Р. И. Амирбекян. К вопросу о некоторых зооморфных символах в искусстве Востока.—Историко-филологический журнал, 1989, № 1, с. 65—78.

Асатрян—Г. С. Асатрян. О «брате и сестре загробной жизни» в религиозных верованиях езидов.—В сб.: Страны и народы Близнего и Среднего Востока—XIII. Курдоведение. Ереван, 1985, с. 262—272.

Асатрян—Лившиц—Г. С. Асатрян, В. А. Лившиц. Курдский язык и этногенез курдов (От истории языка к этнической истории народа).—В кн.: Древний Восток—7. Ереван. (в печати).

Брук—С. И. Брук. Население мира. М., 1982.

Егизаров—С. А. Егизаров. Краткий этнографический очерк курдов Эриванской губернии. Тифлис, 1891.

Жуковский—В. А. Жуковский. Секта «Людей истины»—Аһлі һакк—в Персия.—ЗВОРАО, т. II, вып. I, с. 1—24.

Петтмар—К. Петтмар. Религии Гиндукуша. М., 1986.

Қарцев—Ю. С. Қарцев. Заметки о турецких сзидях.—В кн.: Егизаров (см. выше), с. 235—263.

Майе—Ж.-П. Майе. Павлин и кубок в орнаментации древнеармянских рукописей.—В кн.: Четвертый международный симпозиум по армянскому искусству (Тезисы докладов). Ереван, 1985, с. 190—191.

Минорский—В. Ф. Минорский. Материалы для изучения персидской секты «Люди истины» или Алп-илахи. Часть I. М., 1911.

⁴⁸ Հմմտ. ծան. 24, նաև Guest, 204:

⁴⁹ Հստ արարեցին բնագրի:

- Пропп*—В. Я. Пропп. Ритуальный смех в фольклоре.—В кн.: В. Я. Пропп. Фольклор и действительность. М., 1976, с. 174—204.
- Семенов*—А. А. Семенов. Поклонение сатане у переднеазиатских курдов-езидов.—В кн.: Бюллетень средне-азиатского государственного университета. Вып. 16. Ташкент, 1927, с. 59—80.
- Штакельберг*—Р. Р. Штакельберг. Об иранском влиянии на религиозные верования древних армян.—Древности восточные II/2. М., 1900, с. 1—39.
- Anastase Marie*—P. Anastase Marie. La découverte récente des deux livres sacrés des Yézidis.—*Anthropos. Internationale Zeitschrift für Völker- und Sprachenkunde*. Bd 6/1, 1911, S. 1—39.
- Asatrian—Gevorgian*—G. S. Asatrian, N. Kh. Gevorgian. Zāza Miscellany. Notes on some religious customs and institutions.—In: A Green Leaf (*Acta Iranica* 28), Leiden, 1988, p. 499—508.
- ‘Atar*—شیخ فرید الدین عطار نیشابوری، منطق الطیر، تهران، ۱۳۵۳
- ‘Awad*—کورکيس عواد، المراجع عن اليزيدية، مستل من مجلة المشرق، تشرين الثاني، كانون الاول، ۱۹۶۹، بيروت، ۱۹۷۰، ص ۷۳۱-۶۷۵
- Bittner*—M. Bittner. Die heiligen Bücher der Jeziden oder Teufelsanbeter (Kurdisch und arabisch). Wien, 1913.
- Brentjes*—B. Brentjes. The Mittanians and the Peacock.—In: *Ethnic Problems of the History of Central Asia in the Early Period (Second Millennium B. C.)*. Moscow, 1981, p. 145—148.
- Celil*—Zargollina k'urda. P'ara 2. Brev klrin... O. Celil, C. Celil. Moskva, 1978.
- Damiöl*—صديق الدملاجي، اليزيدية، الموصل، ۱۹۴۹
- Driver*—G. R. Driver. The Religion of the Kurds.—*BSOS*, vol. II/2 (1922), p. 197—213.
- Dyöl*—سعيد الديوجي، اليزيدية، بغداد، ۱۹۷۳
- Eilers*—W. Eilers. Herd und Feuerstätte in Iran.—In: *Antiquitates Indogermanicae*. Innsbruck 1974, S. 307—338.
- Emmerick*—R. E. Emmerick. Saka Grammatical Studies. London, 1968.
- Guest*—J. S. Guest. The Yezidis. London—New Yvrk, 1987.
- Ibn al-Athir*—s. a. القاهرة، ج ۹، الكامل في التاريخ، ابن الاثير،
- Ibn Kathir*—ابن كثير، البداية والنهاية في التاريخ، ج ۱۲، بيروت، ۱۹۸۳
- Ibn Xallikān*—ابن خلكان، وفيات الاعيان وانباء اعيان الزمان، ج ۳، بيروت، ۱۹۷۰
- Ismail-bag Çöl*—اسما عيل بك جول، اليزيدية قديماً وحديثاً، بيروت، ۱۹۳۴
- Kürdö*—قهناتی کوردوو، لبابهت نفیسکار زمانو ته لفيایی پهرتو ليت دينی ئيزيديان.—گوفاری کوری زانیاری کورد، بهندا، ۱۹۷۳، ص ۱۷۹-۱۳۲
- Makas*—Hugo Makas. Kurdische Studien. Heidelberg 1900.
- Meyer*—J. J. Meyer. Trilogie Altindischer Mächte und Feste der Vegetation. Zürich/Leipzig, 1937.
- Mokri 1966*—Nūr All-shāh Elāni. L'ésotérisme kurde. Aperçus sur le secret gnostique des Fidèles de Vérité. Traduction, introduction, commentaires et notes par M. Mokri. Paris, 1965.

- Mokri* 1974—M. Mokri. Cycle des fidèles compagnons à l'époque de Buhîd. Paris, 1974.
- Morgenstierne*—G. Morgenstierne. Irano-Dardica. Wiesbaden, 1973.
- Niklîne*—B. Niklîne. Les kurdes, Paris, 1956.
- Spiegel*—Fr. Spiegel. Erânische Altertumskunde. II Bd, Leipzig 1873.
- Vahman—Asatrian*—F. Vahman, G. S. Asatrian. West Iranian Dialect Materials from the Collection of D. L. Lortmer. Vol. I. Materials on the Ethnography of the Baxtiârîs. Copenhagen, 1987.
- Vollmer—Binder*—Vollmer, W. Binder. Wörterbuch der Mythologie. Stuttgart 1874.
- Widengren*—G. Widengren. Die Religionen Irans. Stuttgart 1964.
- Yaqut*—s. a. 'ياقوت الحموي، معجم البلدان، ج ٥، بيروت'

РЕЛИГИЯ ЕЗИДОВ

(Основные божества; священные книги)

Г. С. АСАТРЯН, А. П. ПОЛАДЯН

Резюме

В статье на основе всестороннего изучения источников и материалов по езидам рассматриваются некоторые ключевые вопросы **езидского вероучения**. Подробно анализируются образы трех главных божеств езидов—Малак-Тавуса, Шейха Ади и Езида. Делается попытка проследить происхождение основных элементов их культа и определить их место в системе религиозных верований езидов. Представлен перевод с курдского на армянский (с подробными комментариями и пояснениями) двух священных книг езидов—«Книги откровения» и «Черной книги». Специальный параграф в статье посвящен анализу языка этих памятников.